դերազանցօրէն դպրոց. այստեղ գալիս էին միայն ուսանելու կամ կատարելագործուելու համար. նա մտաւոր կեդրոնն էր ոչ միայն արևելեան Հայաստանի համար, այլ և հեռաւոր Կիլիկիայից գալիս էին Գլաձորի վարժապետների մօտ իրենց ուսման ծարաւը յագեցնելու։ ԺԴ. դարի վերջին երկու տասնամեակից սկսած մինչև ԺԴ. դարի կէսերը հոգևոր քաղաքակրթական ընոյթ կրող բոլոր երևոյթները մեծ կամ փոքր չափով կապուած են Գլաձորի հետ. այստեղ են իրենց ուսումն ստացել կամ կապուած են Գլաձորի հետ Բ֊ՂՆոյ կամ Արարատեան Սիւնեաց մեծ եպիսկոպոսութիւնների աթոռակալներն ու աչքի ընկնող վարդապետները։ Ներսէս Մշեցու աշակերտն էր Ստեփանոս Օրբէլեան իւր իսկ խօսքերով. «վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից՝ սակաւ մի առեալ զճաշակ ուսանի քաղցրութեան՝ առի հրաման յաստուածազգեաց և յաշխարհալոյս բարուն ապետէն Ներսիսէ, և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական» (*)։ Գլաձորի աշակերտներ են Յոհան Աւրպէլ և Ստեփանոս Տարսայիճ՝ պատմիչ եպիսկոպոսի անմիջական յաջորդներն ու տոհմակիցները. Յոհան Որոտնեցին, որ Տաթևի դպրոցի հիմնադիրը եղաւ Օրբէլեանց շրջանում։ Այստեղ են կատարելագործուել Մխիթար Սասնեցին եւ նորա ընկեր Յոհան Արճիշեցի ոսպնակերը(**). երկուսն էլ իրենց լումաները ձգած մեր մատենագրութեան պատմութեան գանձանակը, իսկ Մխիթարը նաև ղեկավար Մեծոփայ դպրոցի։ Վարդանի աշակերտ էր, բայց հոգևոր կապեր ունէր Գլաձորի հետ յայտնի մատենագիր Յոհան Երզնկացին, իսկ Կիրակոս և սորա եղբօրորդին միւս Յովհաննէս Երզնկացին սնուել են և գործել երկար ժամանակ Գլաձորում. Կիրակոսը մատենագիր–բանաստեղծ, իսկ Յովհաննէսը աննման գրիչ և ապա գործակից Կիրակոսին դպրոցական ասպարիզում հայրենի երկրում։ Հերմոնի դպրոցին հիմնադիրը Տիրատուր վարդապետ Եսայի Նչեցու աշակերտն էր։ Ամբողջ մի հոյլք ունինք գրիչների, բայց և բեղմնաւոր մանրանկարիչների, որոնց գործերին կը ծանօթանանք հետզհետէ (***), այս դպրոցում կըրթուած։ Գլաձորի հետ հոգևոր կապեր են ունեցել Խաչատուր Կեչառեցին, գուցէ և մեր միջնադարեան բանաստեղծութեան պարծանք Ֆրիկը. առաջնի ապացոյցը տեսանք, երբ նորա Գանձերի մասին էինք խօսում. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներին նուիրուած Գանձը գրել է նա Գլաձորի յայտնի գրիչ եւ մանրանկարիչ Պօղոս Կիլիկեցու խնդիրքով (*)։ Իսկ Ֆրիկի համար ունինք հետևեալ ցուցումը. Ալիշան կազմել է նորա և նման տաղասացների երկերի մի ժողովածու՝ որի ոտանաւորների ցանկի վերայ հետևեալ վերնագիրը կայ. «Ոտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թադեուշին եղբօրորդի Դոգոնայի ի վերայ իւր մեղացն, ի վանս բանասիրաց»(**)։ Վերջին ընդգծուած բառերը մենք նոյնացնում ենք Գլաձորի հետ. Ֆրիկի ծագումն արևելեան Հայաստանից պարզել է Տիրայր եպիսկոպոսը. լեզուի նմանութիւնը մեր արևմտեան բարբառների կամ հայերէնի հետ արգելք չէ այդ մտքին, որովհետև ներկայ առանձնայատկութիւններով դժուար է որոշել բարբառների նախնական հայրենիքը։ Թող զարմանալի չերևայ, եթէ յայտարարենք, որ ԺԴ. դարի Անեցիների բարբառը նման առանձնայատկութիւններ ունէր. բայց աւելի պարզ կը լինի, եթէ Խաչատուր Կեչառեցու ժողովրդական ոգւով գրուած ոտանաւորների լեզուն համեմատելու լինինք։ Իսկ Ֆրիկի լեզուի, ոճի, արտայայտութեան ձևերի մէջ և Խաչատուրի այդ կարգի ոտանաւորների մէջ այնքան նմանութիւն կայ, որ ոմանք նոյնացրել են նրանց անձնաւորութիւնները։ Հաստատ համարելով Ֆրիկի հայրենիքը արևելեան Հայաստանում ընդունելու միտքը, իսկ ժամանակը ԺԴ. դարի վերջին տասնամեակներին, անհիմն չէ «վանքն բանասիրաց» արտայայտութիւնը նոյնացնել Գլաձորի հետ։ Ի հարկէ այս մի ենթադրութիւն է դեռ ևս, որ նորագիւտ փաստերով կը հաստատուի կամ կը հերքուի։

Հետաքրքրական է լսել ժամանակակիցների կարծիքը Գլաձորի դպրոցի և նորա վարժապետների մասին, որքան և արևելեան պատկերաւորութեամբ եւ չափազանցութիւններով արտայայտուած լինին, որ աւելի յաճախ կը լսենք գրչութեան արտադրութիւնները թուելիս։ Մկրտիչ գրիչ (Թեղենեաց բարուն) 1298 թուին Գլաձորն անուանում է «երկրորդ Աթէնք պանծալի»(***). Տիրատուր Կիլիկեցին 1309 թուին «մեծ դպրատուն»(****). Մխիթար Երզնկացին 1314 թուին գնում է «մայրն իմաստից Գլաձոր»(*****). Յակոբ Թագորցին 1318 թուին. «համարձակիմ զսա կոչել երկրորդ Աթէնք և մայրաքաղաք ամենայն իմաստից»(******)։ Կիւրեղ գրիչը 1321 թուին անուանում է «հռչակաւոր, սուրբ մենաստան համալսարան»(*******)։ Վարժապետները բնորոշուած են հետև-

(*) Օրբէլեան, Ղուկ. հրատ. 478։

(**) Մեր «Մխիթար Սասնեցի (Կիրմանեցի)» աշխատութիւնը, Արարատ, 1899, 158։ Արտատպուած և առանձին գրքոյկով։

(***) Չամչեան, III. 326, միայն Նչեցու աշակերտների թիւը 363 է հաշուում. Ալիշան վարդապետական աստիճան ստացողների թիւը 360. Սիսական 23։ Ոմն Դէորգ վարդապետ (Ձեռ. էջմ. N° 4226, 300ա) մի ներբող ունի ի պաշտպանութիւն Հայոց, ուր ի միջի այլ հեղինակների յիշում է «մեծ Եսայ վարժապետ ի Նիչ գաւառէն ՅԿ (=360) աշակերտս վարժեաց, որոց մի աշակերտաց նը. էր արմատ դառնութեան. ժանտ Յոհան Քռնեցի ոպ. Ուղայ աշակերտաց քի.»։

(*) Ձեռ. Երևան N° 37/383. ԽԴ. գանձը։

(**) Արարատ, 1918, 71. Տիրայր եպիսկոպոսի յաղուած. «Մոռացուած մի հայ երգիչ»։

(***) Ձեռ. էջմ. N° 1395/1409։

(****) Ձեռ. էջմ. N° 3393։

(*****) Ալիշան, Սիսական, 133։

(******) Ալիշան, Սիսական, 133։

(*******) Տես ցաւելուած Բ., 23։